# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 23

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Նոր Խարբերդ համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 8 նիստի օրակարգը:

2. Գույքը նվիրատվության կարգով անհատույց հանձնելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈՒՐՋՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
5. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
6. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
7. ՕՍԵՅԱՆ ՋՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ**
**ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 24

## ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ, քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքին սեփականության իրավունքով պատկանող, 03-070-0111-0007 ծածկագրի տակ հաշվառված1-ին փողոցի թիվ 22/1 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.046 հեկտար հողամասը և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան 1/3 բաժնեմասը նվիրատվության կարգով անհատույց հանձնել բնակելի տան 2/3 բաժնեմասի ընդհանուր բաժնային սեփականատեր Սիլվա Գարեգինի Խաչիկյանի սեփականությանը:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրյա ժամկետում Սիլվա Խաչիկյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՑՈՒՐԻՉՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
5. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՌԱՖԻԿ
6. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
7. ՕՍԵՅԱՆ ՋՈՀՐԱԲ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ**